ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրում 75 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցմանաշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **14.05.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5** գնման պայմանագրում 2026 թվականի փետրվարի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.17 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
14.05.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 գնման պայմանագրի

ք. Երևան 18. 02..2026թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ.Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վիրաժ» ԱԿ-ն (Գործընկեր-1), ի դեմս ընկերության նախագահ Վ. Աթայանի, «Մերիդի» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս ընկերության տնօրեն Ն. Մովսեսյանի և «Էներգո» ԱԿ-ն (Գործընկեր-3), ի դեմս ընկերության նախագահ Լ. Սարգսյանի (այսուհետ՝ երեքը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 25.03.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2025 թվականի 25-ի N 1910-Ն որոշումը և **ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրում 75 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 14.05.2025թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.17 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1.1 կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պայմանագրի գնից՝ մինչև 74 997 000 (յոթանասունչորս միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում:»:

1.1.2 Հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.3 2026 թվականի ընթացքում աշխատանքների ավարտման համար նախատեսված ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է՝ 205 353 253 (երկու հարյուր հինգ միլիոն երեք հարյուր հիսուն երեք հազար երկու հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է երկու էջից, իսկ Համաձայնագրի հավելվածը՝ 1 (մեկ) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011058006
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Գ. Երիցազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1
«Վիրաժ» ԱԿ
ք. Երևան, Կենտրոն, 0015, Արգիշտիի 11/4, բն. 45
«ԿՈՆՎԵՐՍԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 19300953004200
ՀՎՀՀ 02904086

Նախագահ՝

_____ Ա. Գթայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-2
«Մերիդի» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 2 թղմ. 4Բ, 28բն.
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247470442887000[illegible]
ՀՎՀՀ 08271492

Տնօրեն՝

_____ Ս. Մոսսեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-3
«Էներգո» ԱՁ
Ավան Առինջ, Միկրոշրջան 2/3 [illegible] բն.
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510033127340300
ՀՎՀՀ 01064633

Նախագահ՝

_____ Է. Գևորգյան
(ստորագրություն)

Հավելված
14.05.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 գնման պայմանագրի
18. 02. 2026թ. կնքված N 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/2	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրում 75 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքներ	174 993 000	-	37 498 000	37 498 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	74 996 000	**74 996 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011058006
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1
«Վիրաժ» ԱԿ
ք. Երևան, Կենտրոն, 0015, Արգիշտիի 11/4, բն. 45
«ԿՈՆՎԵՐՍԱԼԿ» ՓԲԸ
Հ/Հ 19300953004200
ՀՎՀՀ 02904086

Նախագահ՝

_____ Է. Նթայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-2
«Մերիդի» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 2 թղմ. 4Բ 28բն.
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474704428870000
ՀՎՀՀ 08271492

Տնօրեն՝

_____ Հ. Մովսեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-3
«Էներգո» ԱԿ
Ավան Առինջ, Միկրոշրջան 2/33/4 բն.
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1510033127340300
ՀՎՀՀ 01064633

Նախագահ՝

_____ Ս. Պարոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«09» 02 2026 թ. N 857/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 26-0037
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՎԻՐԱԺ» ԱԿ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 24,945,500.00 (քսանչորս միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման մի-ջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետը օրվան հաջորդող ինն-ուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 02/05/2028 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ a.manucharyan@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

«09» 02 2026 թ. N 858/10ՏՏ

ԵՐԱՇԽԻՔ N 26-0036
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԻՐԱԺ» ԱԿ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 74,836,300.00 (յոթանասունչորս միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 30/06/2027 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ a.manucharyan@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գնորգ Մաչանյան

«ARMSWISSBANK» CJSC «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955

info@armswissbank.am
www.armswissbank.am
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591

«17» 02 2026 թ. N 1193/10/5

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ

2025 թվականի օգոստոսի 29-ին տրված թիվ 25-0769 Բանկային երաշխիքով (այսուհետ՝ Երաշխիք) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) «ՎԻՐԱԺ» ԱԿ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) խնդրանքով անվերապահորեն պարտավորվել է Պրինցիպալի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/5 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Բենեֆիցիարի կողմից ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ Պահանջ) վերջինիս վճարել դրամական գումար՝ մինչև 91,103,100.00 (իննսունմեկ միլիոն մեկ հարյուր երեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Երաշխիքի պայմաններին համապատասխան:

Սույնով տեղեկացնում ենք, որ 2025 թվականի օգոստոսի 29-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից «ՎԻՐԱԺ» ԱԿ-ին տրված թիվ 25-0769 Բանկային երաշխիքի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 30/12/2026 թվականը ներառյալ՝ Երաշխիքի մնացած պայմանները թողնելով անփոփոխ:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955